


# ԻՐԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ, ԱՐՑԱՄՆ ՈՒ ՔԱՐՔՈՒՆ

Posted on May 19, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Ժիրայր Քոչարեան, Բեռլին, 15 Ապրիլ 2013

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) երեք պատասխանատուներ, երկար տարիներից յետոյ գաղտնագերծել են ԻԻՀ օժանդակությունը Բաքուի կառավարությանը: Առաջին անձնաւորութիւնը՝ Ատրպատական նահանգի Արդաբիլ քաղաքի գլխաւոր հոգեւորական Սէյեդ Հոսէյն Ամէլին է: Նա երկու տարի առաջ (Ապրիլ 2011թ.) Բաքուի իսլամական շարժման առաջնորդ Հաջ ալի Աքրամ Ալիեւի մահուան կապակցութեամբ յայտարարեց, թէ ԻԻՀ Արցախեան պատերազմի ժամանակ օժանդակել է Բաքուի կառավարութեանը:



Դոկտ. Ժիրայր Քոչարեան, Բեռլին, 15 Ապրիլ 2013

Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) երեք պատասխանատուներ, երկար տարիներից յետոյ գաղտնագերծել են ԻԻՀ օժանդակությունը Բաքուի կառավարութեանը: Առաջին անձնաւորութիւնը՝ Ատրպատական նահանգի Արդաբիլ քաղաքի գլխաւոր հոգեւորական Սէյեդ Հոսէյն Ամէլին է: Նա երկու տարի առաջ (Ապրիլ 2011թ.) Բաքուի իսլամական շարժման առաջնորդ Հաջ ալի Աքրամ Ալիեւի մահուան կապակցութեամբ յայտարարեց, թէ ԻԻՀ Արցախեան պատերազմի ժամանակ օժանդակել է Բաքուի կառավարութեանը:



Երկրորդ անձնաւորութիւնը, որը իր գրգռիչ նամակներով, հասցեագրուծ Բաքուի կառավարութեան խորհրդարանի պատգամաւոր՝ Սիաւաշ Նոռուզովին, խօսում է բազմակողմանի օգնութեան մասին, Դոկտ. Մանսուր Հադիդաթփուռը Արդաբիլ քաղաքից պատգամաւոր է ԻԻՀ խորհրդարանում և երկրի անվտանգութեան ու արտաքին յարաբերութիւնների յանձնախմբի փոխ-նախագահն է: Նա դեռ չորս տարի առաջ պահակազօրքի հրամանատարներից էր: Իր կայքում նշուած է իր կենսագրութեան մէջ, որ նա 1988թ. տեղափոխուել է պահակազօրքի արտերկրի հարցերի բաժին և պատասխանատու էր քաղաքական և մշակութային հարցերի համար՝ կապուած Մերձաւոր Արեւելքի տարածաշրջանի, Ասիայի հարաւարեւմուտքի , Կովկասի, Թուրքիայի և Պակիստանի հետ: Այնտեղ նա տարածելով և քարոզելով իսլամական յեղափոխութիւնը, մօտիկ կապեր է հաստատել տեղական իսլամների հետ և շուրջ երկու տարի տեղակայուած է եղել Ադրբեյջանում, որպէս զինուորական խորհրդատու և Արցախեան ազատագրական պատերազմի ժամանակ մարզել և վերապատրաստել է Բաքուի կառավարութեան բանակը: Պարոն Հադիդաթփուռը, ինչպէս ինքն է խոստովանում, վերապատրաստել և զինել է փանթուրքիստներին հայերի դէմ:

Երրորդ անձնաւորութիւնը, որը դարձեալ խոստովանում է օժանդակութիւնների մասին, «Իրանի քաղաքական նպատակայարմարութեան խորհրդի քարտուղար», Մոհսէն

Ռեզային Է՝ պահակազորքի նախկին հրամանատարը:

Մ. Ռեզային Արցախեան ազատամարտի ժամանակ պահակազորքի հրամանատարն էր և հաւանական է, որ ինքն է Հաղիղաթփուռն տեղափոխել պահակազորքի արտերկրի աշխատանքների բաժին: Իրականութեան մէջ Հաղիղաթփուռն ղեկավարը եղել է նոյն ինքն Մոհսէն Ռեզային:

Թէ ինչո՞ւ են այս երեք անձնաւորութիւնները հիմա «գաղտնագերծում» Բաքուի կառավարութեանը հասցրած օժանդակութեան մասին, կարելի է ենթադրութիւններ անել:

Երկու կայքէջերի (arannews.ir և azariha.org) յօդուած-լուրերը հաղորդում են այն տպաւորութիւնը, թէ ԻԻՀ-ը, կամ որոշ անձնաւորութիւններ, շողոքորթում-փայփայում են Բաքուի կառավարութեան Շիա-ազգաբանակչութեանը, ինչպէս նաեւ պարսկական Ատրպատական նահանգի 10-12 միլիոն և գուցէ Է՛լ աւելի, թրքախօս ադրբեյջանցիներին, Իսրայել, ԱՄՆ հաւանական յարձակման պահին լուռ պահելու, ինչպէս նաև գալիք նախագահական ընտրութիւններին թեկնածու Գեներալ Մոհսէն Ռեզայի համար այդ զանգուածիներից քուէները ապահովելու համար: Այսուամենայնիւ, երեքն էլ շեշտում են «Արցախի իսլամական տարածք լինելը»:

Իրողութիւն է, որ Բաքուի կառավարութիւնը հալածում է Շիա-հոգևորականութեանը, յատկապէս ԻԻՀ համակիր հոգևորականներին, հաւակնում է հողային պահանջ ԻԻՀ դէմ: Բաքուի կառավարութիւնը հրահրում և օժանդակում է հակաիրանեան «գիտաժողովներ Բաքուում և այլուր»:

«Հարաւային Ադրբեյջանի ազատ ճակատը», որը աշխարհի ադրբեյջանցիների համագումարի մասնաճիւղն է, այս տարուայ Մարտ 30-ին կազմակերպել էր Բաքուում մի գիտաժողով «Հարաւային Ադրբեյջանի վաղը» թեմայով, որտեղ Ատրպատականը յայտարարում էր Բաքուի կառավարութեան անբաժանելի մասը և ԻԻՀ մեղադրում էր «35 միլիոն ադրբեյջանցի հայրենակիցների մարդկային իրաւունքների ոտնահարման համար» (arannews.ir): Վերը յիշուած կայքէջերի և յատկապէս այս երեք պատասխանատու անձերի յօդուած-յայտարարութիւններում շեշտուում է Պարսկաստանի և Բաքուի կառավարութեան միասնական պատմական անցեալը, մշակոյթը և կրօնը, որտեղ շեշտը միշտ դրուած է կրօնի վրայ՝ անտեսելով փանթուրքիզմի գաղափարախօսութեան գերակայութիւնը կրօնի նկատմամբ: Թրքական աշխարհըմբռնումով, իսլամը միայն միջոց է փանթուրքիզմին հասնելու:

Չարմանելի է, ԻԻՀ դիմակայում է արեւմուտքի և յատկապէս ԱՄՆ-ի բոլոր ճնշումներին, սակայն զիջումներ է անում Բաքուի Ղեկավարներին, մոռանալով Բաքուի յարաբերութիւնները Սիոնիստների հետ, հողային պահանջները, կրօնական հալածանքները, հակաիրանական «գիտաժողովները», պարսկացեղ և պարսկալեզու թաթերի և թալիշների դէմ հալածանքները:

Պատասխանում եմ Պարոն Դոկտ. Մանսուր Հադիդաթիուրի դրդիչ նամակներից մեկին, ուղղում է Բաքուի կառավարության խորհրդարանի անդամ Սիալաշ Նորուզովին՝ որտեղ նա գրգռում է Բաքուի կառավարությանը արցախահայության դեմ խեղաթիւրելով արցախեան ազատամարտը և վիրաւորանքներ ուղղում հայ ժողովրդին:

Նախքան մեր նամակին անցնելը շեշտենք, թէ Շուշիում տեղակայուած «թալիշստանի ռադիոն» հիանալի մտայղացում էր, որի արձագանքներից պարզուով է Բաքուի խոցելիութիւնը այս ոլորտում: Վերջում ակելացնենք, որ arannews-ը, իր լուրերում, յօդուածներում և հարցազրոյցներում, չի մոռանում անպայման յիշատակելու է, թէ «Ղարաբաղը մուսալմանանիստ տարածք է, որին զակթել է Հայաստանը 1992թ. Ռուսների օգնութեանը» և սահմանայի բոլոր բախումները՝ անշուշ, միշտ հայերն են սկսում:

Առ ի տեղեկութեան գրենք, որ մեր առաջին բողոք նամակը azariha.org-ին հրատարակուեց, իսկ այս վերջինը, հասցեագրուած arannews.ir-ին, որի հայերէն թարգմանութիւնը դուք կը կարդաք ստորեւ:

Յարգելի Պատգամաւոր Դոկտ. Հադիդաթիուր,

Ես, որպէս մարդու իրաւունքների կազմակերպութեան անդամ և պարսկաստանցի, հետաքրքրուած եմ տարածաշրջանի պատմութեամբ և հետեւում եմ Կովկասի հետ առնչուող լուրերին և կարդացել եմ Ձեր դրդիչ նամակները հասցեագրուած Բաքուի կառավարութեան խորհրդատու և պատգամաւոր Սիալաշ Նորուզովին arannews.ir կայքում: Այն տպաւորութիւնն ունեմ, թէ Դուք, որպէս պատգամաւոր, լաւ չէք պատկերացնում Ձեր հրահրիչ արտայայտութեան հետեւանքները: Այսուամենայնիւ, արտայայտում եմ իմ խորին զարմանքն ու հիասթափութիւնը Ձեր կողմից օգտագործուած «Ադրբեյջան» կեղծ անուանը: Դուք, մասամբ ծանօթ լինելով այդ տարածքի պատմութեանը, դեմ չէ՞ք այդ կեղծ անուան օգտագործմանը, որին Իրանի թշնամիները նպատակով են խեղաթիւրել, սկսած 1918թ. առ այսօր, որի պատճառն են եղել բոլշեւիկներն ու փանթուրքիստները: Դժուար չէ ըմբռնելը, պետք է միայն խնդրին խելացի մօտենալ:

-1918թ. փանթուրքիստական Մուսավաթ կուսակցութիւնը, Ռասուլզադէի գլխաւորութեամբ, Պարսկաստանի Ատրպատական նահանգի անունը գողանալով տուեցին Առան-ին, այն կոչելով «Ադրբեյջան»:

-1920-ին Կարմիր Բանակը մտնելով Կովկաս, ընդունեց «Ադրբեյջան» կեղծ անունը և կազմեց Ադրբեյջանի Սովետական Հանրապետութիւնը, որ ընդունուեց ՍՍՀՄ կազմի մեջ:

-1941թ., երբ կարմիր բանակը բռնագրաւել էր Իրանի հիւսիսային տարածքները, ՍՍՀՄ իր բանակցութիւններում և մամուլում Պարսկաստանի Ատրպատական անունը կեղծելով, այն անուանում էր «Հարաւային Ադրբեյջան»:

1945-ի Դեկտեմբերին, Ստալինի կարգադրությամբ հիմնուեց «Ադրբեյջանի Դեմոկրատական Հանրապետություն», Թաւրիզ մայրաքաղաքով, անջատուած Պարսկաստանից:

-1945-ի Դեկտեմբերին «Դեմոկրատական Կուսակցութիւնը», Կարմիր Բանակի հովանաւորութեամբ, Թաւրիզում և Ատրպատական նահանգի միւս վայրերում «Ադրբեյջանի Ազգային Իշխանութիւն» կոչուած կառավարութիւնը իշխանութիւնը ստանձնեց իր ձեռքը:

-«Դեմոկրատական կառավարութիւնը» բոլոր միջոցների դիմում էր, մինչև Կարմիր Բանակի հեռացումը 1946-ի գարնանը, իշխանութիւնը իր ձեռքում պահելու:

1991թ., երբ ՍՍՀՄ-ը փլուզուեց , մի անկախ պետութիւն, նոյն կեղծ անունով՝ «Ադրբեյջանի Հանրապետութիւն», կեանքի կոչուեց:

Անջատողականների և փանթուրքիստների գրականութիւնում տարածում գտած «Հարաւային Ադրբեյջան» կեղծ եզրը, իսթան հանդիսացաւ, որպէսզի Բաքուի խորհրդարանում քննարկուի «Ադրբեյջանի Հանրապետութիւն» անունը և փոխել «Հիւսիսային Ադրբեյջանի Հանրապետութիւն»-ով, որպէսզի «հարաւային Ադրբեյջանի ազատագրում» նշանաբանով, իսկական Ադրբեյջանը՝ Ատրպատականը , Պարսկաստանից անջատելով միացուի «Հիւսիսային Ադրբեյջանին»:

-Այսօր, այն ատրպատականցի հայրենակիցները, որոնք ընկել են փանթուրքիստների ծուղակը և յատկապէս մարգահամալիրներում (իբր քաջալերում են իրենց սիրած ֆութբոլի խումբը) բարձրացնելով «Ատրպատականը Պարսկաստան չէ, մա՛հ Պարսկաստանին» պաստառները, փորձում են Բաքուի ծաւալապաշտ պարագլուխներին լսելի դարձնել իրենց հայրենիքին (Իրանին) դաւաճանելու պատգամները:

Պարոն Հադիդաթփուռ, ամէն մի անձ, թէկուզ չնչին գիտութեամբ, նկատի առնելով վերը նշուած իրողութիւնները, ի վիճակի է զգալ Իրանի տարանջատման վտանգը,

Սակայն շատ ափսոս, որ Դուք, պատգամաւոր լինելով հանդերձ, բուն թշնամուն դեռ չէք նշմարել և փոխանակ լուրջ ընդունելու Բաքուի փանթուրքիստների ծաւալապաշտական նպատակները, հպարտանում էք Արցախեան Ազատագրական Պատերազմում այդ հանցագործներին օգնելու համար:

Դուք պատերազմի վեց տարիների ընթացքում, որպէս զինուորական պատասխանատու, օժանդակել էք մի դաժան ռեժիմի՝ ճնշելու արցախահայութեանը, ի հարկէ Դուք Ձեր «օժանդակութեամբ» մենակ չէիք, Բաքուի կողմից պարտադրուած պատերազմում մասնակից են եղել Թուրքիայից փանթուրքիստներ, չէչէն ու աֆղան վարձկաններ, նրանց շարքում յայտնի չէչէն ոճրագործ Բասաւերը, ինչպէս նաև ռուս և ուկրաինացի վարձկան օդաչուներ:Եւ այս բոլորով հանդերձ չկարողացան Արցախի

Ժողովրդին ծնկի բերել: Պատճառն էլ յստակ է, արցախահայուհիները մղում էր կենաց ու մահու պատերազմ:

Պարոն Հաղիղաթփուռ, արցախեան ազատամարտը ընթանում էր մի ցեղամուլ և հեգեմոնեան հովերով տարուած մի ռեժիմի և հայ ժողովրդի միջև՝ իրենց նախնիների հայրենիքում, լաւ գիտակցելով՝ զինեալ դիմադրութիւն չցուցաբերելու պարագային արցախահայուհիները ունենալու է նոյն ճակատագիրը, ինչ ունեցան իրենց հայրենակիցները Արևմտահայաստանում, թուրք-օսմանների օրօք», այսինքն ցեղասպանութիւն և կամ հայրենիքից բռնագաղթ:

Պարոն Հաղիղաթփուռ, տեղեա՞կ էք արդեօք արեւմտահայերի ցեղասպանութեան մասին առաջին աշխարհամարտի ժամանակ, թուրք-խալամ Օսմանցիների ձեռամբ նաեւ կովկասահայութեան կոտորածների մասին, որոնք տեղի ունեցան հէնց Օսմանեան փանթուրքիստների դրոմամբ:

Չեմ կարող ենթադրել, թէ կոտորածների նկատմամբ Դուք անտարբեր էք:

Յարգելի Պարոն, մեջբերենք մի հատուած Ձեր նամակից, ողջուած Պարոն Նոռուզովին, «Պարոն պատգամաւոր, Ղարաբաղից ի՞նչ լուր, միթէ Դուք չէ՞ք կարօտել Ղարաբաղ գեղեցիկ երկիրը, նրա լեռները, աղբիւրները և գետերը: Ինչո՞ւ միջոցներ չէք ձեռնարկում այն ազատագրելու, Ձեր կեցուցացքը յիշեցնում է ինձ Ֆաթիալիշահ Ղաջառին, որի իշխանութեան օրօք Կովկասը անջատուեց Իրանից, և նա երկրամասը վերադարձնելու համար երկու Ֆիլի ոսկէ շղթաներ և բազում թանկարժէք նուէրներ ուղարկեց Ռուսաց ցարին, սակայն նա անդրդուելի մնաց: Դուք և Ձեր երկրի իշխանաւորները հայ զաւթիչների հետ բանակցութեան սեղանի շուրջ էք նստել, յոյսով, որ գուցէ Ղարաբաղը յետ ստանաք, սակայն աւա՛ղ, որեւէ զաւթիչ բանակցութեամբ պատրաստ չի լինի տարածք վերադարձնել իրական տիրոջը»: Պարոն Հաղիղաթփուռ, Դուք, որ քաջաբար հնչեցնում էք պատերազմական շեփորը, չէ՞ք մտածում, երբ Բաքուի իշխանութիւնը ձեր աջակցութեամբ Արցախը «վերադարձրեց», յաղթանակով հարբած Բաքուի փանթուրքիստները չէ՞ն ձեռնարկելու «իրենց հարաւային եղբայրների փրկութիւնը», «Պարսիկ շովինիստների» մագիլներից:

Յարգելի Պարոն, Ի՛հ՛ Հ խորհրդարանի, ազգային անվտանգութեան և արտաքին քաղաքականութեան յանձնախմբի նախագահի տեղակալ, ի՞նչ էք ենթադրում, Իսրայէլից գնուած հրթիռները և միւս զինատեսակները, որոնք, Ձեր ասելով, թիրախ ունեն Թաւրիզն ու միւս քաղաքները, «Արցախը վերադարձնելու» համա՞ր են թէ՞ Պարսկաստանի վրայ յարձակուելու:

Բաքուի ժառանգական իշխանութիւնը, որը բնաւ առնչութիւն չունի հանրապետութեան հետ, ամրագրելով «Ադրբեյջան» կեղծ անունը, հաւակնում է տեր կանգնել Իրանի Ատրպատական՝ իրական Ադրբեյջանին, և այն յաճախ շեշտուել է թէ՛ ներկայիս և թէ՛ անցեալ իշխանաւորների կողմից: Ձեր օժանդակութիւնը սատար էր կանգնել Իրանի

թշնամիներին, փանթուրքիստներին և ճնշել ու ճնշում է Արցախի ազգաբնակչության: Փանթուրքիստները պատերազմում գործել են ժրնեւեան համաձայնության դեմ, գործածելով արգիլուած զէնքեր՝ շարիկային, ասեղնային ռումբեր և այլն, որոնք իրականացւում էին ռուս և Ուկրայնացի վարձկան օդաչուների կողմից:

Գուրգէն Մարգարեանի ողբերգական մահը Սաֆարովի կացինով, և վերջինիս Բուդապեշտից ազատումն ու զինուորական կոչման տուչութիւնը ապա և նրա փառահեղ դիմաւորումը Բաքւում, ապացոյցներ են Ալիեւի մականի տակ դաստիարակուած Ադրբեյջանի հասարակութեան ատելութեան մասին հայերի նկատմամբ:

Բաքուի իշխանութեան կողմից, իրենց բնակավայրերից և տներից բռնատեղահանուեցին հարիւր հազարաւոր հայեր, որոնց բնակարաններին տիրացան Բաքուի իշխանութեան մերձաւորները, թոյլ չտալով Ադրբեյջանցի փախստականերին բնակուել այնտեղ, այլ նրանց պարտադրեցին տեղաւորել շփման գծի երկայնքով, ճամբարներում, բորբոքելով նրանց մէջ հայատեացութիւնը:

Ալիեւի իշխանութիւնը և նրա կամակատարների ցեղամուկ կեցուացքը անուանի գրող Աքրամ Այլիսի նկատմամբ, ով այս միջոցին Բաքուից հեռացել է, ապացուցում է այդ հասարակութեան անհանդուրժող կեցուածքը: Արցախահայութիւնը դասեր քաղելով Արևմտահայաստանի 1915թ. Ցեղասպանութիւնից և Նախիջեւանից, Սումգայիթից, Բաքուից, Կիրովաբադից և այլուր բռնատեղահանումներից, քաջատեղեակ է, թէ փանթուրքիստ-ցեղամուկները նպատակադրել են հայոց բնաջնջումը և գոյութեան միակ ուղին ինքնապաշտպանութիւնն է:

